ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ÐÓÊÎÂÎÄÈÒÅËÜ ÁÎÏÀÐÀÒÀ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N 04/04.2/6335-16 «19» 12 2016թ.

«Հետք» թերթի լրագրող Մարինե Մադաթյանին
<<Հետաքննող լրագրողներ>> ՀԿ
/ հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ,
հեռ՝ 563363, 580219, 094 40 46 24,
էլ.հասցե՝ info@hetq.am, hetq@hetq.am./

Հարգելի Մարինե Մադաթյան

Հայտնում եմ, որ Ձեր՝ 2016 թվականի դեկտեմբերի 13-ին <<Հետքում>> հրապարակած հոդվածի նյութերն ուսումնասիրելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի N 1256-Ա/2, 07.12.2016թ. հրամանով ստեղծված է եղել հանձնաժողով: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներից պարզ է դարձել, որ ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների սովորողներին անվճար հատկացվող դասագրքերը տպագրվել են ՀՀ մարզերի, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԳՆ ենթակայության ուսումնական հաստատությունների կողմից ներկայացրած հայտերի հիման վրա: Տպագրված դասագրքերի թիվը չի գերազանցել հայտերով պահանջվող դասագրքերի քանակը:

2016 թվականի հուլիսի 12-ին ՀՀ ԿԳՆ 04/07.2/8340-16 ելից գրությամբ <<Հետքին>> ուղարկվել են Երևանի քաղաքապետարանից, ՀՀ մարզերից, ԿԳՆ դպրոցներից ստացված հայտերի **պատճենների օրինակները**՝ տարրական դասարանների դասագրքերի պահանջվող քանակի վերաբերյալ: Տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ. ՀՀ **Լոռու մարզի** հայտի աղյուսակ-ձևաթուղթը ուղարկվել է էջերի ոչ լիարժեք քանակով, ինչից առաջացել է անհամապատասխանություն Լոռու մարզի տարրական դասարանների դասագրքերի իրական պահանջի և <<Հետքի>> հրապարակած հոդվածում ներկայացված դասագրքերի հայտի

թվաքանակի մեջ: Աղյուսակում ընդգրկված 42 անուն դասագրքից <<Հետքը>> ստացել է 28-ը: Հաշվարկից դուրս են մնացել <<Ռուսաց լեզու 3>> / 2792 հատ/, <<Անգլերեն 4>> /2358 հատ/, <<Ֆրանսերեն 4>> /208 հատ/, <<Գերմաներեն 4>> /283 հատ/ առարկաների հայտերը:

Տպագրված դասագրքերի անվանացանկում ներառված են ՀՀ Շախմատի Ակադեմիայի կողմից հրատարակված <<Շախմատ>> առարկայի դասագրքերը, իսկ աշխատանքային տետրերի հայտագրում անցկացնելու կարիք չկար, քանի որ <<Շախմատ>> առարկայի աշխատանքային տետրերը՝ ՀՀ Շախմատի Ակադեմիայի գրավոր առաջարկությամբ, յուրաքանչյուր ուսումնական տարվա համար տպագրվում են՝ ըստ սովորողների քանակի:

ՀՀ ԿԳ նախարարության հաստատված ծրագրով տարրական դասարաններում <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկան ուսուցանվում է ընդամենը ՀՀ 83 դպրոցներում /ցուցակը կցվում է/ , այդ պատճառով <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների տետր-դասագրքերի պահանջի գնահատման կարիք չի եղել:

83 դպրոցների ուսուցիչների և 2-4-րդ դասարանների սովորողների համար տպագրվել է ընդհանուր առմամբ 9000 տետր-դասագիրք՝ ըստ աշակերտների թվաքանակի, հետևյալ համամասնությամբ.

2-րդ դասարան – 3000 հատ,

3-րդ դասարան – 3000 հատ,

4-րդ դասարան – 3000 հատ:

<<Հետքի>> հրապարակած հոդվածում նշված է, որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից <<Կերպարվեստ>> առարկայի 3-րդ և 4-րդ դասարանների դասագրքերի հայտեր ՀՀ ԿԳ նախարարությանը չեն ներկայացվել և շուրջ 18 մլն. ՀՀ դրամի դասագրքեր են տպագրվել: Տեղեկացնում եմ, որ 3-րդ և 4-րդ դասարանների համար տպագրվել են 5000-ական <<Կերպարվեստ>> առարկայի դասագիրք, որոնց ընդհանուր գումարը կազմել է 14 մլն. 250 հազ. ՀՀ դրամ: ՀՀ ԿԳՆ ենթակայության դպրոցներից, մարզերի և Երևանի քաղաքապետարանի դպրոցներից <<Կերպարվեստ>> առարկայի 3-րդ և 4-րդ դասարանների դասագրքերի հայտեր ՀՀ ԿԳ նախարարություն չեն ներկայացվել, քանի որ ՀՀ ԿԳՆ-ի կողմից առաջադրած հայտագրման աղյուսակ-ձևանմուշի մեջ եղել է բացթողում. <<Կերպարվեստ-3>> և <<Կերպարվեստ-4>> առարկաների դասագրքերի պահանջը չի ներառվել: Դասագրքերի ամփոփ տեղեկանքը կազմելիս բացթողումը բացահայտվել է:

Ժամանակի սղության պատճառով դասագրքերի նոր հայտագրում չի կատարվել, և դասագրքերի կարիքի գնահատումը կատարվել է դպրոցների տնօրենների, մարզային կրթության վարչությունների հետ անցկացված բանավոր հարցումների հիման վրա: Հարցումներից

պարզվեց, որ դպրոցներում առկա են նախորդ՝ 2012, 2013 թվականներից մնացած քիչ մաշվածությամբ դասագրքեր, ինչը հնարավորություն տվեց նախարարությանը ձեռք է բերել <<Կերպարվեստ>> առարկայի դասագրքերի **նվազագույն քանակ**՝ ընդամենը 5000-ական դասագիրք համամասնորեն՝ 3-րդ և 4-րդ դասարանների սովորողների համար:

Ներկայացվում են հանձնաժողովի կողմից ուսումնասիրված նյութերը.

1. ՀՀ կառավարության N 496-Ն, 21.04.2016թ. որոշումը,
2. Երևանի քաղաքապետարանի, մարզերի, ՀՀ ԿԳՆ ենթակայության ուսումնական հաստատությունների պահանջվող դասագրքերի հայտերը,
3. 2016 թվականի ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների պահանջվող դասագրքերի ամփոփ հայտը,
4. ԿԳՆ-ի կողմից /04/07.2/573-16,2016-01-22/ ելից գրությամբ Երևանի քաղաքապետարանին, մարզերին, ՀՀ ԿԳՆ ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններին տրամադրված հայտագրման աղյուսակ-ձևանմուշը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Կ.Բաբայան
Հեռ. 524777